ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երեւան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ.փոստ՝ meo@ypc.am

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

Ընդդեմ ArmDay.am կայքի՝ Վիտալի Մանգասարյանի բողոքի վերաբերյալ

Դիտորդ մարմնի կազմը՝

Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Գեղամ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Մեսրոպ ՄՈՎՍԵՍՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Կարինե ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին է դիմել 2018թ. դեկտեմբերի 9-ի արտահերթ խորհրդարանական ընտրություններում պատգամավորության թեկնածու (այժմ պատգամավոր) Արգիշտի Մեխակյանի նախընտրական շտաբի ղեկավար Վիտալի Մանգասարյանը՝ ընդդեմ ArmDay.am լրատվական կայքում 2018թ. դեկտեմբերի 1-ին հրապարակված «Իմ քայլը» դաշինքի «սերժահանրապետական» թեկնածուները» հոդվածի:

Ըստ բողոքի հեղինակի՝ հոդվածը «(...) չի համապատասխանում իրականությանը և պարունակում է զրպարտանք», իսկ կայքի ղեկավարությունը «(...) հրաժարվել է տեղադրել հերքման մասին մեր նյութը, որով խախտել է «ԶԼ մասին» օրենքը»:

Ա. ՓԱՍՏԵՐ

1. ArmDay.am լրատվական կայքում 2018թ. դեկտեմբերի 1-ին հրապարակվել է «Իմ քայլը» դաշինքի «սերժահանրապետական» թեկնածուները» հոդվածը, որում կան տեղեկություններ և որակումներ, որոնք կարող էին գնահատվել իբրև զրպարտչական կամ վիրավորական:

2. Պատգամավորության թեկնածու (այժմ պատգամավոր) Արգիշտի Մեխակյանի նախընտրական շտաբի ղեկավար Վիտալի Մանգասարյանը դիմել է ArmDay.am կայքի ղեկավարությանը՝ իրենց պատասխանը հրապարակելու պահանջով, սակայն կայքը հրաժարվել է հրապարակել դիմողի ներկայացրած տեքստը: Վ. Մանգասարյանն այն հրապարակել է իր ֆեյսբուքյան էջում:

3. Դիտորդ մարմինը 2019թ. հունվարի 18-ի նիստում կազմակերպել է բողոքի նախնական քննարկում, ապա,

առաջնորդվելով իր Աշխատակարգի 4.11 կետով. («4.11. Նախաձեռնության անդամ չհանդիսացող ԶԼՄ-ների հրապարակումների վերաբերյալ բողոքները կարող են քննվել տվյալ լրատվամիջոցի համաձայնության դեպքում»), 2019թ. հունվարի 21-ին նամակով դիմել է ArmDay.am լրատվական կայքի գլխավոր խմբագիր/տնօրեն Տաթև Այվազյանին:

4. 2019թ. հունվարի 23-ին Դիտորդ մարմինն ստացել է Տաթև Այվազյանի պատասխանը, որում մասնավորապես ասված է.

«(...) հրապարակումից հետո մեզ հետ կապ է հաստատել այդ ժամանակ պատգամավորի թեկնածու, ներկայումս «Իմ քայլը» դաշինքի պատգամավոր Արգիշտի Մեխակյանի նախընտրական շտաբի պետ Վիտալի Մանգասարյանը: Վերջինիս հայտնել ենք, որ պատրաստ ենք հրապարակել նաև իրենց տեսակետը:

Նույն օրը մեզ ուղարկվել է տեքստ, որը որևէ կերպ կապ չուներ հերքման հետ, և պարունակում էր լրատվական կայքի և հոդվածը պատրաստած լրագրողի հասցեին վիրավորանքներ: Վիտալի Մանգասարյանին տեղյակ ենք պահել, որ այդ ձևով այն չենք հրապարակի, առաջարկելով հերքել հոդվածում առկա իրենց գնահատմամբ ոչ ճիշտ տեղեկությունները, և զերծ մնալ վիրավորանքներից և մեղադրանքներից, ինչը չի արվել: Այժմ էլ պատրաստակամ ենք հրապարակել իրենց տեսակետը, դարձյալ կրկնելով, որ հերքման տեքստը պետք է զերծ լինի մեղադրանքներից»:

Բ. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

I. **«Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք**

Հոդված 8. Հերքման և պատասխանի իրավունքը
(...)
4. Պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ թեկնածուի մասին տարածված տեղեկատվության հերքումը կատարվում է 24 ժամվա ընթացքում: Եթե մինչև քվեարկության սկիզբը մնացել է ոչ ավելի, քան 24 ժամ, ապա հերքումը կատարվում է դրա մասին պահանջն ստանալուն պես: Նշված ժամկետում հերքման տարածումը հնարավոր չլինելու դեպքում դա պետք է տարածվի սույն հոդվածով սահմանված ժամկետում:
(...)
6. (...) Պատասխանը չպետք է հակասի սույն օրենքի պահանջներին և պետք է վերաբերի միայն պատասխանի առարկա տեղեկատվության մեջ տեղ գտած փաստացի անճշտություններին: Այն չպետք է պարունակի պատասխանի առարկա տեղեկատվությունը պատրաստած կամ տարածած

անձի, ցանկացած այլ անձի կամ նրանց գործունեության քննադատություն, եթե դա ուղղակիորեն կապված չէ այդ տեղեկատվության հետ:

II. **Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների Էթիկական սկզբունքների Կանոնագիր**

1. Ճշգրտություն և անկողմնակալություն

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝

1.1. մինչև հրապարակումը ստուգել ցանկացած աղբյուրից ստացված տեղեկությունների հավաստիությունը, չկոծկել և չխեղաթյուրել փաստերը, չհրապարակել ակնհայտ կեղծ տեղեկություններ,

1.2. հստակորեն ու լսարանի համար հասկանալի մատնանշել այն դեպքերը, երբ խմբագրությունը, ստանալով հանրային նշանակության տեղեկություններ, օգտագործել է բոլոր հնարավոր ողջամիտ միջոցները, սակայն չի կարողացել ճշտել փաստերը,

6. Ազնվություն հանրության հետ հարաբերություններում

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝

6.1. աջակցել կարծիքների ազատ փոխանակմանը, անկախ նրանից, որ այդ կարծիքները կարող են տարբերվել խմբագրական տեսակետներից,

6.2. պատրաստակամ լինել հանդիպելու այն անձանց կամ կազմակերպությունների ներկայացուցիչներին, որոնք իրենց վիրավորված կամ զրպարտված են համարում կոնկրետ հրապարակմամբ, և պատասխանի հնարավորություն ընձեռելու բոլոր նրանց, ում հասցեին քննադատություն կամ մեղադրանքներ են եղել հրապարակումներում,

Գ. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

1. ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինն իրավասու չէ գնահատելու հոդվածում ներկայացված փաստերի համապատասխանությունն իրականությանը, հետևաբար՝ նաև զրպարտչական բնույթը, սակայն արձանագրում է, որ հոդվածագիրը, չբերելով ներկայացվող մեղադրանքների իսկությունը հավաստող կոնկրետ փաստեր, դրանց բացակայությունը լրացրել է պիտակավորումներով (օրինակ՝

վերնագրում), ընդհանուր բնույթի մեղադրանքներով (օրինակ՝ **«Իմ քայլը» դաշինքի հաջորդ «հերոսը», հերոսի՝ Մեխակ Մեխակյանի որդի Արգիշտի Մեխակյանն է, ով կարող է «Վարչական ռեսուրսի և կապիտալի ներդրումը ընտրապայքարում» թեմայով դասախոսություններ վարել Շմայսի, Լֆիկ Սամոյի և մյուս բոլոր նախկին ու ներկա ՀՀԿ-ականների հետ»** կամ՝ **«Կարելի է ասել, որ այս թեկնածուն բացի «փող բաժանելուց», ամեն ինչ անում է (...)»)՝** օգտագործելով այնպիսի ոճ, որն անընդունելի է որակյալ և բարեխիղճ լրագրության տեսանկյունից։

2. Հոդվածը շարադրված է հղում կատարելով անանուն աղբյուրներին, որոնց պաշտպանությունը «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով լրատվամիջոցին տրված իրավունք է։ Սակայն ըստ «Քաղաքացիական օրենսգրքի» 1087.1 հոդվածի՝ այդ դեպքում լրատվական գործունեություն իրականացնողը պատասխանատվություն է կրում հրապարակման համար։ Հետևաբար, տվյալ դեպքում, լրատվամիջոցը պարտավոր էր հերքել տեղեկությունները, եթե չուներ իրականությանը համապատասխանության ապացույցներ։

3. Այսուհանդերձ, պատասխանի այն տեքստը, որը լրատվամիջոցին է ներկայացրել Արգիշտի Մեխակյանի նախընտրական շտաբի ղեկավար Վիտալի Մանգասարյանը (և որը նա հետո հրապարակել է իր ֆեսբուքյան էջում), հակասում է պատասխանին վերաբերող օրենսդրական պահանջին («Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք, հոդված 8), պարունակում է գնահատականներ **(«Քարոզչական սև PR-ով զբաղվող մարդիկ, ցավոք, խառնելով թացը չորի, կիսատ ճշմարտությունը ստի հետ, փորձել են արատավորել (...)», «Հոդվածագրի տրամաբանությամբ՝ իրականությունը վերածվում է աբսուրդի թատրոնի։ Բայց վերոհիշյալ հոդվածում առաջնայինը ո՛չ տրամաբանությունն է, ո՛չ էլ իրականությունը։ Գլխավորը զրպարտելն ու ցեխ շպրտելն է քարոզարշավի առաջատար թեկնածուի վրա»)**, որի պատճառով կայքը կարող էր մերժել հրապարակել հերքումը։

4. Դիտորդ մարմինն ի գիտություն է ընդունում ArmDay.am կայքի ղեկավարության պատրաստակամությունը՝ հրապարակելու Վիտալի Մանգասարյանի հերքումը կամ պատասխանը, եթե այն չհակասի օրենքի պահանջներին։

Եթե Վիտալի Մանգասարյանը պատրաստ է ներկայացնելու նոր հերքման կամ պատասխանի տեքստ, իսկ ArmDay.am կայքի ղեկավարությունը պատրաստակամ է հրապարակելու այն, ապա ԴՄ-ն կարող է միջնորդ դառնալ և լիազորում է ԴՄ համակարգող Մեսրոպ Հարությունյանին՝ հանդիպելու կողմերին և համաձայնեցնելու պատասխանի տեքստը։

Ընդունվել է ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի 2019թ. մարտի 19-ի նիստում,
Դիտորդ մարմնի հետևյալ կազմով՝

Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մամուլի փորձագետ

Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, «Արմենիա» հեռուստաընկերության «Ժամը» լրատվական հաղորդման գլխավոր խմբագիր, «Newmag» ամսագրի գլխավոր խմբագիր

Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, Երևանի մամուլի ակումբի նախագահ

Արա ՇԻՐԻՆՅԱՆ, «Շողակաթ» հեռուստաընկերության գեղարվեստական ղեկավար

Նունե ՍԱՐԳՍՅԱՆ, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն

Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ, Արմավիրի «Ալտ» հեռուստաընկերության խմբագիր

Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ, Media.am-ի պրոդյուսեր

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձևավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 46-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015 թվականի մայիսի 16-ի ընդհանուր ժողովում: